ՀՏԴ: 739.2(479.25)+947.925
DOI: 10.54503/2579-2830-2024.1(11)-247

Arsen YARMAN. Osmanli Döneminde Mücevher ve Ermeni Kuyumcular. 2 c. Yapi Kredi Yayinlari. İst., 2021, 688, 714 s.

ՕՍՄԱՆՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՈՀԱՐԵՂԵՆԸ ԵՎ ՀԱՅ ՈՍԿԵՐԻՉՆԵՐԸ

Ստամբուլահայ գիտնական Արսեն Յարմանի նոր հիասքանչ գիրք - ալբոմը

Եթե ուզում ես երկրիդ գործերը հաջող ընթանան՝
հանձնարարիր դրանք հայերին...
Եգիպտոսի փոխարքա Մուհամմեդ Ալի

Ստամբուլի «Yapi Kredi Yayinlari» հրատարակչությունը լույս է ընծայել Արսեն Յարմանի հերթական կոթողային երկը՝ երկհատոր ուսումնասիրություն-նկարազարդ ալբոմը՝ նվիրված Օսմանյան կայսրությունում հայ ոսկերչությանը, գոհարեղենին, ոսկերիչներին:

1500 մեծադիր էջերից բաղկացած գիրքը առատորեն հարստացված են մինչ օրս քիչ հայտնի և անհայտ փաստական հսկայական նյութով, ֆաքսիմիլեներով, սև և գունավոր լուսանկարներով:

Այս գիրքը ներկայացնում է Օսմանյան կայսրությունում հայ ոսկերչության մասին: Եվրոպայում Օսմանյան կայսրությունը հայտնի էր իր վայրագ էությամբ, փակ՝ եվրոպական քաղաքակրթության առջև: 17-րդ դարից ի վեր, երբ մասամբ բացվեց երկաթե վարագույրը, Կայսրություն մուտք գործեցին ճանապարհորդներ, զինվորականներ, միսիոներներ և դիվանագետներ: Սուլթանական այս երկիրը դարձավ խորհրդավոր մի անկյուն, որը դեպի իրեն սկսեց ձգել շատերին՝ ծնունդ տալով բազմաթիվ իրական ու մտացածին ճանապարհորդական պատմությունների, գրական ստեղծագործությունների, տասնյակ օպերաների, պիեսների, գեղանկարչական սքանչելի ստեղծագործությունների՝ արևելյան ոճը մոդայիկ դարձնելով եվրոպական արքունիքներում, սալոններում և այլն:

Բառացիորեն ծանրակշիռ այս հատորները բացում են կայրության խորհրդավորության վարագույրներից մեկը, որը վերաբերում էր գոհարեղենին,

ավելի ստույգ՝ պոլսահայ ոսկերիչների աննման ստեղծագործություններին, որոնց մի մասը որպես սուլթանական նվերներ, առաջին դեսպանների միջոցով տարածվում էին արևմտյան թագավորական արքունիքներում, ինչպես նաև մատուցվում Կայսրություն այցելող միապետներին, թագուհիներին, ծովակալներին, նշանավոր անձանց:

Գոհարեղենի աշխարհը, գոհարվաճառությունը, ադամանդագործությունը Օսմանյան կայսրությունում մի քանի դար եղել է հայազգի ոսկերիչների, արծաթագործների, դրամահատների մենաշնորհը: Նրանց ստեղծած պերճանքի ու կենցաղային իրերն այսօր էլ զարդարում են Թուրքիայի, աշխարհի թանգարանները՝ անանց հիացում պատճառելով:

Արսեն Յարմանի գիրքը շարունակում է այս ասպարեզի ուսումնասիրությունը: Այն իր մեջ ներառում է մի քանի կարևոր շերտեր, առանց որոնց լիարժեք չէր լինի գոհարեղենի և ադամանդագործ ոսկերիչների մասին պատմությունը: Իսկ այն ընդգրկում է Օսմանյան կայսրության պատմությանը հավասար մի ժամանակաշրջան: Այն անհնար է պատկերացնել առանց հայ ոսկերիչների մի քանի սերունդների պատմության:

Նրանց անունները, կնիքները (օսմաներեն, հայերեն, հայատառ թուրքերեն) իրենց ստեղծած արվեստի նմուշների վրա չեն թողնի, որ Օսմանյան կայսրության մշակույթում մեծագույն ներդրում ունեցած վարպետների, նկարիչների, թանկարժեք քարերի մշակողների, դրամահատարանի մասնագետների անունները պատմության մոռացության գիրկն անցնեն:

Բնականաբար, այս խնդրի երախտավորները նաև դրանց պատմության ուսումնասիրողներն են: Փառք աստծո, այն փաստերի այնպիսի մեծ պաշար է պարունակում, որ գոհարագործության ասպարեզի ուսումնասիրությունը դարձնում է իրապես հեքիաթային պատմություն, բարի ու նաև՝ չար ոգիների գոյությամբ:

Գիրքը Ա հատորում ներկայացվում է 1-7 գլուխներով, Բ հատորում՝ 8-11 գլուխներով:

Հեղինակը գիրքը ձոնում է ծնողներին և կնոջը՝ որպես երախտիքի տուրք:

Գիրքը շարադրելիս, ի տես բոլոր չքնաղ իրերի, ներկայացվում, հիշվում են ընտանեկան որոշ գեղեցիկ մասունքներ, ինչպիսիք են եղել Հարություն պապի գրպանի ոսկե ժամացույցը՝ անվան գեղազարդ տառերով փորագրված, ընտանեկան կենցաղային իրեր և սպասքից նմուշներ, հայ վարպետների եզակի գեղեցկության և արժեքի առարկաներ և այլն:

Ա հատորի առաջին էջերը նվիրված են հրատարակությանը աջակից շուրջ 150 անուններին ուղղված (անհատներ և կազմակերպություն, թանգարաններ) շնորհակալության, երախտագիտության խոսքերի:

Ամենահայտնի, երկրի համար կարևորագույն նշանակություն ունեցող ասպարեզներում (վառոդի արտադրություն, նավաշինություն, դրամափոխություն, ճարտարապետություն, քաղաքաշինություն և այլն, և այլն) ադամանդագործությունը, դիվանագիտությունը, առևտուրը, ոսկերչությունը, արծաթագործությունը, մշակույթի տարբեր ճյուղերը, նշանակալի տեղ են զբաղեցրել՝ իրենց մեջ ներառելով նաև երկրի դրամահատարանի, գանձատների գործը:

Նախապատմությունների մասում տեղ են գտել թանկարժեք քարերի, դրանց արևելյան ու արևմտյան, պարսկական ու հնդկական շուկաների ու վաճառականների Օսմանյան կայսրություն հասնելու պատմությունները: Առանձին գլուխ է հատկացվել հայտնի «Քափալը չարշը»՝ «Փակ շուկային», որը համարվել է հայ ադամանդագործների, գոհարավաճառների, արծաթագործների, գորգագործների, բրուտագործների, հնավաճառների (անթիկաջը) «պալատը»: Այստեղ շուկայում առկա տարբեր արհեստների պատմություններն են, խանութների, վաճառականների ու վարպետների առանձին ու խմբակային նկարներ, արհեստանոցների, էսնաֆների (արհեստակցական խմբավորումների) ու դրանց ղեկավարների ցուցակներ, այցետոմսեր, ազդագրեր, հասցեներ… Հրաշալի փաստաթղթեր կարելի է համարել Պոլսի տարբեր շուկաների մասին մանրամասն տեղեկություններն այնտեղ աշխատող հայերի մասին, խաների ներքին հարդարանքի, խանութների ու վաճառվող ապրանքների մասին տպավորություն ստեղծող լուսանկարները: Այդ մանրամասն ցուցակում խաների, շուկաների թիվը շուրջ 60 է:

Առանձնացվում է «Փակ շուկայի» հնավաճառների, հավաքածուների մասին գլուխը, ուր հայերը գլխավոր տեղում են եղել:

Օսմանյան շրջանի արհեստների, գիտության զարգացման մեջ իրենց մեծ ավանդն է ունեցել հայ ամիրայական խավը: Հանդիսանալով պալատական ծառայության մեջ, նրանք ղեկավարում էին երկրի կյանքի բազմաթիվ ասպարեզներ՝ սկսած բանակից մինչև տարբեր կենցաղային կարևորության բնագավառներ:

Հատկանշվում է սուլթանների բարեհաճ, վստահելի ու բարեկամական հարաբերությունները հայ ամիրայական տների հետ (Մահմուդ Բ, Աբդուլմեջիդ, Սելիմ Գ սուլթանների այցելությունները Տյուզյաններին): Արսեն Յարմանը ամիրայական դասի մասին պատմելիս ներկայացնում է բազմաթիվ լուսանկարներ՝ կապված նրանց ընտանիքների, տների, կահկարասիի, անգամ ագարակների հետ, ընտանեկան լուսանկարներ: Երևում են Բոսֆորի ափերը զարդարող և Պոլսի տարբեր թաղերում նրանց հրաշալի տները, որոնք այսօր հանրապետության նախագահի նստավայրից մինչև օտար երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների և պետական տարբեր հաստատությունների են վերածվել: Դրանց որոշ մասն այնքան գեղեցիկ է, որ Պոլիսը ներկայացնող փոստային նամականիշների նյութ է դարձել և այսօր էլ հիացմունք են պատճառում Բոսֆորով ճամփորդողներին:

Սուլթանական պալատը, ի թիվս պալատական տարբեր ծառայությունների տնօրինողների, հայ ոսկերիչներին է վստահել իր դրամահատարանը, փողերանոց-գանձարանը: Պալատական բարձրաստիճան հայ ծառայողները *ամիրաներն* են եղել: Դրանց մեջ չափազանց հայտնի անուններ կան, որոնք մեծագույն ներդրում են ունեցել երկրի արդյունաբերության, մասնավորապես, ռազմական գործի, երկրի տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման մեջ: Գալով ոսկերչությանը, ադամանդագործությանը՝ ամենահայտնի անուններից է համարվում Տյուզյանների տոհմը, որի մի քանի սերունդներ ծառայել են տարբեր սուլթանների օրոք:

Ի վերջո, գրքի 6-րդ գլխից սկսվում է երկրի ադամանդագործության և դրամահատարանի՝ Տյուզյան ամիրայական տոհմի ստեղծագործական գործունեության, այդ տարիների լավագույն որակների, գյուտերի արձանագրության ներկայացումը:

Ադամանդագործների և գոհարավաճառների մի մասը նաև դրամափոխությամբ էր զբաղվում՝ հանդիսանալով Կայսրության բանկային գործի հիմնադիրները:

«Լույս և խավար» գլուխն այնքա՜ն խոսուն է տվյալ ժամանակաշրջանի համար: Նկատի ունենք տյուզյանական դարաշրջանը, որը չկարողացավ զերծ մնալ հիմնականում հրեական շրջանակների նախանձից, մահացու խարդավանքներից, քանզի նժարին դրված դրամահատարանի գործը նրանց մղում էր ամեն մի հնարքով տապալել Տյուզյան ազնվագույն ընտանիքի իշխանությունը և իրենց ձեռքը վերցնել նրանց գործը, ունեցվածքը: Առաջին հատորն ավարտվում է նաև Ճեվեհիրճյան ընտանիքի՝ այս ոլորտում գերիշխելու պատմությամբ:

Գիրքը նկարազարդված է հայտնի անձնավորությունների, սուլթանների, պարսիկ շահերի, արքայադուստրերի գեղանկարներով, լուսանկարներով, հայ հայտնի ընտանիքների կանանց շքեղագույն, սամույրակար հագուստներով ու զարդերով նկարներով (հիմնականում արված Աբդուլլահ եղբայրների լուսանկարչատան կողմից) և առանձին զարդերի ու կենցաղային իրերի (ձիու և ձիավորի համար, մոմակալներ, հայելիներ, թասեր, աթոռներ, զարդատուփեր, անձնական օգտագործման և արարողակարգային իրերի, կնիքների լուսանկարներով, որոնց մեծ մասը հայկական պատկանելության են: Ընդհանրապես շատ է անդրադարձը սուլթանական թեմային, առանձնապես գեղանկարչությանը, մասնավորապես, Մանասների հռչակավոր գերդաստանի ստեղծագործություններին, լինի սուլթանների նկարներ, թե նրանց դիմանկարներով պերճաշուք, ադամանդազարդ իրեր՝ շքանշաններ, մեդալներ, տարբեր բնույթի ադամանդներով ընդելուզված ոսկեզօծ տուփեր: Արսեն Յարմանը, սովորության համաձայն, հրամցնում է բազմաթիվ թանգարանների և մասնավոր հավաքածուներից վերցված եզակի քարտեզներ, աշխարհագրական վայրերի ու հուշարձանների, այդ թվում՝ հայկական վանքերի և եկեղեցիների նկարներ, Ստամբուլը ներկայացնող հրաշալի փորագրանկարների լուսանկարներ: Ոսկերչությունը ներկայացվում է նախ՝ որպես պալատական արհեստ, ուր զարդերից բացի՝ շքանշաններ են, չալմաների ապառոշներ, հաշվիչ-թզբեհներ, դրամներ, զենքեր, կահույք, երաժշտական գործիքներ (Զիլճյան ծնծղաներ), բազմաթիվ նորահայտ արխիվային նյութեր, պատմական արժեքի հրամանագրեր, սուլթանական կոնդակներ, նամակներ, պալատական հագուստների ու զարդերի, արդուզարդի առարկաներ:

Գրքում չափազանց արժեքավոր են 17-18-րդ դարերի դրամափոխների ընդարձակ ցուցակները (հայրանուններով, ըստ սուլթանական ժամանակաշրջանների, ըստ գործատեղերի տարբեր հասցեների): Առանձին են արքունի, պալատական, կառավարական դրամափոխների արխիվային ցուցակները: Ազգության տողերում համարյա բոլորը հայ են՝ մեկ հրեա և մեկ հույն: Ըստ թվականների կան դրամափոխների դասի (գիլդիա) անդամները, նախագահներով (քեդ-

խուդա), ղեկավար կազմով և իրենց կնիքներով: Սրանք հետագայի երկրի բանկային համակարգը ներկայացնողներն են:

Իհարկե, ամենագայթակղիչը զարդերն են՝ առանձին նկարագրություններով ըստ թանկարժեք քարերի, դրանց մեծության, արժեքի ու անհրաժեշտ չափագրության, թանգարանային համարակալության, հաշվեցուցակներ, կնիքներ, այցետոմսեր ու ազդագրեր: Հետաքրքրություն են ներկայացնում փարիզյան հայտնի գոհարավաճառների կատալոգները՝ օսմանյան, տարբեր սուլթաններին պատկանած զարդերի ներկայացմամբ, նրանց բացատրություններով: Թագերը, ապառոշները, կանացի բոլոր տեսակի զարդերը՝ հսկա քարերով: Դրանք զարմացրել ու նորաձևության փարիզյան սիրահարների մոտ մեծ իրարանցում են առաջացրել: Ապշեցնում են օգտագործված քարերի չափսերը և առատությունը: Եվրոպայի արքայական տներին մատուցված գոհարեղենները ապշեցուցիչ են իրենց գեղեցկությամբ և թանկարժեք քարերի չափսերով: Անգլիայի թագուհի Վիկտորյային ամուսնության առիթով Մահմուդ Բ-ի նվիրած հսկա եռաշար ադամանդե վզնոցով և ականջօղերով, զմրուխտե կրծքազարդով թագուհու (բռոշ) մի քանի գեղանկարները հիացում են առաջացնում: Ակնհայտ է, որ դրանք թագուհու նախընտրած, տոնական շքեղ զարդերն են եղել: Հիասքանչ են Սելիմ Գ-ի կողմից անգլիացի ծովակալ Հորացիո Նելսոնին նվիրված ադամանդակուռ «Հիլալ նիշան» շքանշանը, ոսկեթել ուսադիրները, 1798 թ. Նեղոսի հաղթանակի առթիվ նրան նվիրած ադամանդե զամբյուղ-զարդը, Վիլհելմ Բ-ին նվիրած թանկարժեք արծաթե սկահակները կամ ռուսական ցարին Սելիմ Գ-ի դիմանկարով ադամանդակուռ զարդատուփը: Այն կարելի է համարել օսմանյան դիվանագիտության հատուկ «արտահայտություններ»: Չափազանց արժեքավոր են եղել ադամանադակուռ շքանշանները: Այս և այլ զարդերի կողքին Արմեն Յարմանը ներկայացնում է հայ պատրիարքների ոսկյա, ոսկեկար ու արծաթեկար հագուստները, թանգարժեք քարերով ագուցված արարողակարգային իրերը, մասունքատուփերը, խնկամաններն ու ծնծղաները, ավետարանների, գրքերի կազմերը:

Բ հատորն ամփոփում է 8-11 գլուխները: Այն է՝ 18-19 դդ. ադամանդագործությունը և գոհարեղենը, հայկական եկեղեցական ոսկերչությունը՝ Ս. Էջմիածնի և Կիլիկիո կաթողիկոսությունների, Երուսաղեմի և Պոլսի պատրիարքարանների հավաքածոներ, Արևմտյան Հայաստանի մշակութային տարբեր քաղաքներում, կենտրոններում ստեղծվածներ, ոսկերիչների միությունների տարբեր շուկաներում, տարբեր խաներում և տարբեր ժամանակներում գործող վարպետների ցուցակներ, ուր հազիվ 2-3 այլազգի ոսկերչի անուն կգտնեք: Հետաքրքիր են ոսկերչական արհեստանոցների, խանութների, բազմաթիվ գործիքների մասին պատմությունները, նկարները:

19-20 դ. սկզբի օսմանյան դարաշրջանի ոսկերչության մասին, առանձին ոսկերիչների գերդաստանների և գոհարավաճառների տների մասին հարուստ նյութը զուգակցվում է նրանց ստեղծագործությունների էսքիզներով, լուսանկարներով:

Առանձին ուսումնասիրության առարկա է դարձել շուրջ 70 ոսկերիչ-ադամանադագործ հայ գերդաստանների և առանձին վարպետների գործունեությունը: Նրանց կենսագրականները, գերդաստանի ծառերը, հայտնի գործերը, դրանց նկարները, կից՝ զարդերի և օգտագործված թանկարժեք քարերի մանրամասն նկարագրությունները և արժեքային հաշվակալական նյութերը, երբեմն նաև՝ պատվիրատուների, զարդերի տերերի նկարները՝ համապատասխան գոհարեղեններով: Դրանց թվում են հայ հոգևորականներ՝ կաթողիկոսներ և պատրիարքներ, եպիսկոպոսներ և բարձրաստիճան այլ հոգևորականներ: Այդ գրառումները, հաշվեցուցակները, վարպետների կնիքները, որպես կանոն, հիմնականում օսմաներեն, հայատառ թուրքերեն լեզուներով են եղել: Շատ հաճախ՝ բազմաթիվ էջեր են նվիրված արքունի բարձրաստիճան պաշտոնյաների, արքայադուստրերի[1], սուլթանուհիների, արքայազնների և ամենից շատ՝ սուլթանների յուղաներկ գործերին, ուր ադամանդակուռ սրերը, թրերը, անձնական իրերը, պերճանքի առարկաները, կենցաղում նրանց համար նախատեսված սպասքը, զարդերը՝ ապառոշները, մատանիները, թագերը, կրծքազարդերը, ապարանջանները, կնիքներով և անվան գլխատառերով մատանիները, շքանշանները զարմացնում են իրենց արժեքավորությամբ, թանկագին, մեծ քարերի առատությամբ: Կարևոր են հագուստները և դրանց վրայի ոսկեկար, արծաթաթել աշխատանքը, նաև՝ գահեր, վարագույրներ, սպասք և այլն: Չմոռանանք նշել, որ ոսկերչությունն իր մեջ ներառել է գործին անքակտելիորեն սատարող, մաս կազմող ավելի քան տասնյակ առանձին արհեստներ, առանց որոնց այս արհեստը գոյություն չէր ունենա:

Առանձին գլուխներ են նվիրված ադամանդակուռ զենքերին, ժամագործությանը, ուր երգող ժամացույցներն առանձին տեղ են գրավում: Չմոռանանք հիշել, որ ականավոր կոմպոզիտոր Տիգրան Չուխաճյանի հայրը նման ժամացույցների հայտնի վարպետներից է եղել:

Գալով արքունի ընտանիքի անդամներին, մասնավորապես, տարբեր տարիքի զուգված, զարդարված արքայադուստրերին, օսմանյան պետության տարբեր շքանշաններին, մեդալներին, օտար արքայական տների թագավորների, թագուհիների, ծովակալների, զորավարների, բարձրաստիճան այրերի և կանանց՝ օսմանյան շքանշաններով զարդարված լինելուն, ապա դրանք հրաշալի վկայություններ են հայ ադամանդագործության և ոսկերչության բարձր մակարդակի, կայսրությունում և նրա սահմաներից դուրս ունեցած նրանց ստեղծագործությունների գնահատանքի ու հաջողությունների փաստի: Գեղանկարների մեծ մասը հիմնականում եվրոպացի հայտնի նկարիչների ստեղծագործութ-

[1] Ֆրանսիական մամուլը L'IllUSTRATION (Journal Universel, № 601), ազդարարելով Աբդուլ Մեջիդ սուլթանի դստեր՝ Ֆաթմա Սուլթանի և հայտնի քաղաքական այր Ռեշիդ փաշայի որդու՝ Ալի Գլիպ փաշայի ամուսնության լուրը, առաջին էջում զետեղել է Ֆաթմա Սուլթանի լուսանկարը՝ ներառված արքայադստեր «զամբյուղի» ադամանդյա գեղեցիկ զարդերի շրջանակում: Հոդվածի վերջում ասվում է, որ այդ զարդերի հեղինակը Մ. Մկրտիչ Մելքոնյանն է: Հոդվածի հեղինակ՝ Villers-Franq:

յուններ են: Հանդիպում են, իհարկե, հայ նկարիչների գործեր, որոնցից ամենահայտնիները հայազգի Մանասների և Ռաֆայել Մանասի գործերն են: Իսկ լուսանկարների ճնշող մեծամասնությունն արքունի լուսանկարիչների՝ Աբդուլլահ եղբայրների գործերն են:

Հայկական հոգևոր կենտրոնների հավաքածուների իրերը եկեղեցական արարողակարգային իրեր են՝ մեռոնի եփման հսկա կաթսաներից ու մասունքատուփերից, խորանին դրվող բազմաթիվ առարկաներից մինչև գրքերի և ձեռագրերի հարուստ կազմերը, թագեր, գավազաններ, արծաթե, ոսկյա, էմալապատ, սրբանկարներով, թանկարժեք քարերով խաչեր, խաչեր, խաչեր…

Ելնելով գրքում եղած պատկերներից՝ դրանք ամենատարբեր տեխնիկայի աշխատանքներ են: Իսկ այդ աշխատանքների, մասնագիտական բազմաթիվ խնդիրների մասին մանրամասն նյութն ուղեկցվելով դրանց լուսանկարչական պատկերների հետ՝ հրաշալի ներկայացնում են այն ստեղծողներին, միջավայրը, պայմանները:

Կարևոր մի հանգամանք ևս: Ու՞մ և ի՞նչ առիթների համար էին նախատեսված այս ստեղծագործությունները, որոնց արժեքը ավելին էր, քան որպես զարդ լինելը:

Իհարկե, զարդերի, պերճանքի առարկաների, արքայական անձնական կյանքում բացի ճոխության առարկա լինելուց, դրանց որոշակի մասը կոչված էր շրջապատելու դրանց տերերի կյանքը թանկարժեք, գեղեցիկ առարկաներով, սեղանի սպասքով և ամենօրյա անձնական օգտագործման, ամենօրյա արդուզարդի իրերով՝ սանրներով, տարբեր հայելիներով, խոզանակներով, ամենատարբեր նշանակության ու մեծության տուփերով, ջրի, սուրճի, օշարակի թանկարժեք քարերով ագուցված բաժակներով, հովհարներով, կահույքով, կենցաղում ամենօրյա օգտագործման պարագաներով՝ երաժշտական գործիքներ և այլն: Որոշ իրեր պատմական որոշակի արժեք ներկայացնող տարբեր հուշարձանների մանրակերտներ են: Վերջիններից են սուլթանի կամ նրա մերձավորների համար ծննդյան, աթոռակալության և տարբեր կրոնական տոների առթիվ առանձին անհատների կամ համայնքների կողմից նվիրվող իրերը: Շոգենավերի, աշտարակների, պալատների արծաթե և ոսկե մանրակերտներ, ծննդյան տարեդարձների համար նվիրվող մակագրություններով ծաղկամաններ, տարբեր չափսերի սափորներ, բյուրեղապակե և արծաթե ծաղկամաններ, սեղանի լուսամփոփներ, տարբեր տեսակի մրգամաններ և մատուցարաններ, սուրճի և թեյի գավաթներ, ամբողջական սպասքներ, աթոռներ, գահավորակներ, ծխամորճեր (որոշ նկարներում դրանց երկարությունը 1 մետրից ավելին է և գետնին են հենվում), չքնաղ ծխախոտատուփեր (պորտսիգարներ), որոնց վրա մանյակներից ավել ադամանդ և թանկարժեք այլ քարեր են եղել ագուցված, տարբեր գույների սաթե տերողորմյաներ (թըզբեհներ), գավազաններ, դրանց բռնատեղիները, պատի, սեղանի, գրապանի ժամացույցներ, նկարների շրջանակներ: Գալով ժամացույցներին, նշենք, որ հայ ժամագործները համագործակցում էին եվրոպական հայտնի անունների, ինչպես, օրինակ, շվեյցարական «Լոնժին» ժամացույցի ֆաբրիկայի հետ: Դրանց վարպետների տուփերի վրա հաճախ կա-

ռելի էր կարդալ, օր. «J. Tolayan. Joailler-Horloger. Constantinople» (Ժ. Թոլայան. Ոսկերիչ-ժամագործ, Կոստանդնապոլիս), կամ՝ «Maison d' Horlogerie, Joaillerie & Dépôt de Coffres-Fort K. Makoulian-Fils. Rue Yéni-Djami No. 38, 39,40. Stambul». Նույնպիսի մակագրություններ լինում էին ժամացույցների արտաքին և ետևի մասերում, հիմնականում՝ ֆրանսերեն: Ժամացույցների թվացույցների վրա՝ Պոլսի նշանավոր, գեղատեսիլ պատկերներն էին:

Սովորաբար նվերները տրվում էին հատուկ ոսկեկար, ասեղնագործ թավշե տուփերով, որոնք այն ստեղծած վարպետների անվանական մակագրություններով էին լինում՝ հիմնականում օսմաներեն կալիգրաֆիայի հիանալի նմուշներ հանդիսացող մակագրություններով, այդ իրերի վրա տարբեր զինանշաններով, նշելով առիթը, նվիրողին, իհարկե նաև վարպետի կնիքով, որն ավելի էր արժևորում նվերը: Այս մակագրված իրերը կարող են պատկերացում տալ նաև տարբեր առիթներով սուլթանին կամ այլոց տրվող նվերների, նրանց արժեքների մասին: Երբեմն դրանք պատվիրատուի, ստեղծագործ հեղինակի ճաշակի, երևակայության այնպիսի անձեռակերտ շքեղ օրինակներ են, որ պատիվ են բերել թե նվիրատուին, թե այսօրյա տերերին, թանգարաններին՝ ներկայացնելով Օսմանյան կայսրության ժամանակների հայկական ոսկերչությունը, ադամանդագործությունը: Հայ ոսկերիչներին էին պատվիրվում արտասահմանյան արքայական տների, դրանց առանձին տիրակալների համար նախատեսվող, օսմանյան սուլթանների կողմից տրվող, ուղարկվող նվերները: Դրանք առանձին մաս էին կազմում կայսրության և եվրոպական թագավորական տների, երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների:

Երկրորդ հատորի մի ամբողջ գլուխ նվիրված է պալատի համար արված գործերին: Դրանք նախատեսված են եղել Մայր թագուհիների, թագուհիների, արքայադուստրերի, հարեմի կանանց համար: Թագեր, գլխարկների և փաթթոցների ապառոշներ, մանյակներ, ապարանջանների միացման առանձին զարդեր, գոտիներ և մատանիներ, առանձին գլխազարդեր, կրծքազարդեր (բռոշներ), ականջօղեր, ճարմանդներ, կոճակներ, երբեմն՝ սուրաներից հատվածներ փորագրված գրություններով, մեդալներ, կանանց տրվող շքանշաններ, կենցաղային իրեր, սպասք՝ ոսկե թասեր, մոմակալներ, ինքնաեռեր, թեյնիկներ, ջահեր: Այսօր էլ անսխալ կարելի է տարբերել լավագույններից՝ «ազնավուրը», որը լավագույն արծաթեղենի և ոսկերչության արվեստի գագաթներից է: Վարպետի յուրատեսակ զարդանախշը մինչ օրս էլ տարբերվում է իր կատարման եզակի տեխնիկայով և նրբագեղությամբ: Առարկաների զարդերի սյուժեները չափազանց տարբեր են եղել՝ ծաղկային, կենդանական, երևակային, կայսրության սիմվոլներով (աստղ և լուսին):

Առանձին գլուխ է «Պատերազմ և արհեստ, ոսկերչություն և զենքեր»: Խանչալներ իրենց պատյաններով, սրեր, թրեր, որոնց պատյանները երբեմն ոսկերչության գլուխգործոցներ են: Հրացաններ, պարկուճներ, յաթաղաններ, ձիասարքի շքեղ պարագաներ, թամբեր, ասպանդակներ, ձիավորի հագուստներ, որոնց վրա թանկարժեք քարերի կողքին հաճախ են հանդիպում սուրա-

ներից տողեր: Հետաքրքրական են դրանք արտադրող հայկական ֆաբրիկաների լուսանկարները:

Մենք գիտենք, որ Հայոց պատրիարքարանը պարտավոր էր տարեկան որոշակի «հարկ» վճարել կառավարությանը, պալատին և ամենատարբեր առիթներով արժեքավոր նվերներ մատուցել պալատին:

Օսմանյան սուլթանների մի քանի սերունդներ իրենց դրամահատարանը, փողերանոցը (գանձարանը՝ սուլթանական և մայր թագուհու) վստահել են հայ ոսկերիչներին, նրանց գերդաստաններին, որոնք միաժամանակ արքունի ոսկերիչներ են եղել: Նրանք իրենց աննախադեպ կարգապահությամբ, տաղանդով և անձով հարգանքի և հիացումի զգացումներ են թողել թուրք և օտար շրջանակներում: Սա չի նշանակում, որ ամեն ինչ այնքան դյուրությամբ է հաղթահարվել, անամպ մթնոլորտում: Արքունի նախարարները, մասնավորապես գանձապետները, ոսկերիչները միշտ էլ եղել են թիրախ այդ պաշտոններին երազող հրեա, հույն վարպետների խարդավանքների, ինչը երբեմն ազնվագույն հայ տաղանդներին ողբերգական վախճանի է հասցրել: Հիշենք միայն Տյուզյան գերդաստանի 5 անդամների դաժան մահապատիժը և այս տան կործանումը՝ կեղծ պարսավագրերի հիման վրա: Որքան էլ որ մի քանի օր անց խաբեությունը բացվում է՝ արդեն ուշ էր: Տաղանդաշատ ու ազնիվ մի գերդաստան, ինչպիսին էր արքունի ոսկերիչներ Տյուզյանների ճանաչված ընտանիքը՝ այլևս չէր վերականգնվելու[2]:

Բ հատորն արժեքավոր է նաև նրանով, որ տրվում են հայ ոսկերիչների ցուցակներում տեղ գտած հարյուրավոր վարպետների նկարները, նրանց ստեղծագործությունները, նրանց տները, ընտանեկան լուսանկարները: Որոշ ոսկերչական տների, ոսկերիչների պատմությունը հասցվում է մինչև մեր դարաշրջանը, մեր օրերը:

Գիրքն առատորեն ներկայացնում է հարուստ անվանացանկ, օգտագործված նյութերի աղբյուրագիտական ընդարձակ ցանկ:

Ափսոսանքով ես փակում գրքի վերջին էջերը: Այն նման է ընդարձակ ու սքանչելի հեքիաթի, որի անունն է հայ ադամանդագործությունը Օսմանյան կայսրությունում:

Հասմիկ ՍՏԵՓԱՆՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

[2] Այս մասին մանրամասն տե՛ս Ստեփանյան Հասմիկ. Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում. Երևան, 2011, էջ 213-218: